

**ԾՐԱԳԻՐ**  
**ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ**  
**ԿԵՆՏՐՈՆԻ**

**I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ծրագիրը նախատեսում է Արցախի պետական համալսարանի բազայի վրա, ՀՀ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և ՀՀ-ում գրանցված ու գործող «Ապագա» հոգեբանական ծառայության առաջատար մասնագետների աջակցությամբ ստեղծել հոգեբանական կենտրոն՝ «Հոգեբանական արագ արձագանքման մասնագիտական խումբ», որի գլխավոր նպատակն է Արցախյան պատերազմի, նախկինում տեղի ունեցած և ապագայում հավանական մարտական գործողությունների պատճառով առաջացած լարված իրավիճակների հետևանքով տուժած անձանց, ինչպես նաև հոգեբանական դժվարություններ ունեցող զինծառայողների, նրանց ընտանիքների անդամների և սահմանամերձ գյուղերում բնակվող քաղաքացիական անձանց համար ապահովել հոգեբանական ուղղորդման, հոգեկան առողջության վերականգնման, հոգեկան խանգարումների կանխարգելման հոգեբանական աջակցության պայմանները, որը ենթադրում է՝

- ✓ ստեղծել հոգեբանական կենտրոն՝ ծառայություն, որում ներգրավված կլինեն համապատասխան ուղղություններով մասնագիտական վերապատրաստում անցած հոգեբաններ (Արցախի պետական համալսարանի երիտասարդ դասախոսներ, ասպիրանտներ, մագիստրոսներ, բակալավրիատի բարձր կուրսերի ուսանողներ):
- ✓ մշակել միջոցառումների համակարգ, որը կնպաստի հոգեբանական աջակցության կարիք ունեցող անձանց բացասական ապրումների բարդությունների նվազեցմանը, հոգեկան առողջության պահպանմանը:
- ✓ իրականացնել սոցիալ-հոգեբանական հետազոտություններ՝ առաջադրվելով հետևյալ հարցերը.

- հստակեցնել հոգեբանական աջակցության բովանդակությունը,
- ճշտել կիրառվող հետազոտական գործիքակազմը,
- Արցախի Պաշտպանության Բանակի հետ համագործակցելով ուսումնասիրել անհատական և խմբային աշխատանքների դրվածքը զորամասերում, բնակչության շրջանում,
- ուսումնասիրել անձնակազմի տարբեր օղակներում գոյություն ունեցող քողարկված և հավանական անհատական և խմբային հիմնախնդիրները:

Ուսումնասիրությունների հիման վրա ներկայացնել եզրակացություններ՝ մշակելով հոգեբանական երաշխավորություններ, առաջադրելով լուծումներ:

## II. ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Արցախն ապրում է «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ», իսկ երբեմն էլ՝ իրական պատերազմական իրավիճակում, որի արդյունքում առաջ են գալիս հոգեբանական և սոցիալ-հոգեբանական բնույթի բազմաթիվ խնդիրներ, սակայն առ այսօր չկան բնակչությանը հոգեբանական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ մեխանիզմներ, քննության չեն առնված բնակիչներին և զինվորականներին պատշաճ ու պատեհաժամ հոգեբանական աջակցության ցուցաբերման խնդիրները: Առավելագույնս կարևորված չէ հաղթական պատերազմի հոգեբանական դերն ու նշանակությունը: Մինչև այսօր չկա նաև ամբողջական ուսումնասիրություն, որը նվիրված լինի Արցախի Հանրապետության բնակչության և հակառակորդի վրա հոգեբանական ներազդման մեխանիզմների բազմակողմանի վերլուծությանը, դրա ռազմավարական նշանակությանը: Բնակչությունն իրազեկված չէ, թե ինչպես պետք է գործել հակառակորդի լայնածավալ հոգեբանական հարձակումների, տեղակատվական ներազդման հնարքների կիրառման դեպքում:

2016թ. ապրիլյան իրադարձությունները ցույց տվեցին, որ մեր երկրում խոշոր անելիքներ են կուտակվել ինչպես զինված ուժերի անձնակազմի շրջանում հոգեբանական կայունության որակների ձևավորման ու զարգացման, մարտական գործողությունների հոգեխոցիչ ազդեցությունների թուլացման, բանակի անձնակազմի մարտական համալրման ու մշտական կազմի հարաբերությունների կարգավորման, հոգեամատիկ խանգարումներ ու վիրավորումներ ունեցող անձանց հոգեբանական աջակցության ցուցաբերման ուղղությամբ: 2015 թ. ամռանը ՀՀ ՊՆ առաջարկով Խ. Աբովյանի անվան ՀՊՄՇ հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի հոգեբանական խմբի կողմից ԱՀ N գորամասերում իրականացվել է ուսումնասիրություն, որի նպատակն էր վեր հանել գորամասերի տարբեր օղակներում գոյություն ունեցող հոգեբանական աշխատանքների բացթողումներն ու թերությունները, ինչպես նաև ծառայության տարբեր անձնակազմերի սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները, որոնք արտահայտված կամ քողարկված ձևերով նկատվում են նրանց անհատական վարքագծում, ջոկերում և վաշտերում գոյություն ունեցող ներխմբային հարաբերություններում, շարքային և սպայական անձնակազմերի վարքային դրսևորումներում: Վաղուց հայտնի է, որ զինվորի գործունեության արդյունավետությունը կախված է նրա ընդհանուր հոգեֆիզիոլոգիական վիճակից: Զինվորի արդյունավետ մարտական վիճակը (ԱՄՎ) ձևավորում են ֆիզիկական, մտավոր և հոգեբանական բաղադրիչները: ԱՄՎ-ի ֆիզիկական և մտավոր բաղադրիչները համեմատաբար հեշտ են ձևավորվում մարտական ուսուցման ժամանակ՝ պարապմունքների արդյունքում, իսկ հոգեբանական բաղադրիչը, որը մյուս բաղադրիչների հենքն է, առավել դժվարությամբ: Կարևորելով

գործառնաբերում իրականացվող հոգեբանական աշխատանքների անհրաժեշտությունը, փաստում ենք՝

1. Զինվորական հոգեբանների հաստիքները սակավ են, եղած մասնագետները չունեն անհրաժեշտ մասնագիտական պատրաստվածություն:
2. Զինվորական հոգեբանների պաշտոններում հաճախ նշանակված են մասնագիտական կրթություն չունեցող մարդիկ, բացակայում է նրանց կիրառական հոգեբանության բնագավառի փորձը:
3. Զինվորական հոգեբանների աշխատանքը մեծամասամբ իրականացվում է շտաբներում՝ շեշտը դնելով թղթավարական գործառնությունների վրա:
4. Ունենալով վերադասից իջեցված գործառնություններ՝ պարտականությունների ձևով, հոգեբանը դժվար է պատկերացնում դրանց կատարման ուղիները, տեխնոլոգիաները:
5. Չունենալով մասնագիտական զարգացման հնարավորություններ՝ հոգեբանը վեր է ածվում հրահանգներ կատարողի՝ կորցնելով նախաձեռնողականությունը:
6. Հոգեբանասոցիալական թրեյնինգներ գրեթե չեն իրականացվում: Անհատական աշխատանքը կրում է մանկավարժա-դաստիարակչական բնույթ, ինչը չի կարող փոխարինել ավելի արդյունավետ հոգեբանական աշխատանքին:
7. Սպա-հոգեբանների մոտ սակավ է մասնագիտական գործիքակազմը, գրականությունը:
8. Թույլ է հոգեբաններին մեթոդական աջակցության ցուցաբերման համակարգը:
9. Թույլ է ստորաբաժանումների սպաների և հոգեբանի համագործակցությունը:
10. Թույլ է կրտսեր հրամկազմի հոգեբանական կոմպետենտությունը (իրավահաստությունը):
11. Թույլ է ջոկ, դասակ, վաշտ օղակում հոգեբանական փոխօգնության, հոգեբանական աջակցության գործառնությունները:
12. Մարտական առաջադրանքն իրականացնող խմբերն իրենց կողքին չեն զգում հոգեբանի անհրաժեշտ ներկայությունը:
13. Մարտական առաջադրանքները իրականացելուց հետո գրեթե բացակայում են հոգեբանական վերլուծության և լիցքաթափման աշխատանքները:
14. Սպայական անձնակազմը համալրող նորեկ սպաների զգալի մասը չունի համապատասխան հոգեբանական գիտելիքներ ու կարողություններ:

2016թ. ապիլյան մարտական գործողությունները բացահայտեցին հոգեբանական բնույթի մի շարք այլ խնդիրներ՝

✓ Արցախում չկա պրակտիկ հոգեբանների կառույց, որը կարող է արագ արձագանքել պատերազմական և հետպատերազմական վիճակում հայտնված անձանց, ընտանիքներին և կառույցներին:

✓ Արցախի փոքրաթիվ հոգեբան մասնագետները կարիք ունեն վերապատրաստումների՝ հետևյալ ուղղություններով՝ «Ցավ, կորուստ, վիշտ ապրած անձանց և ընտանիքների հետ հոգեբանական աշխատանքի առանձնահատկություններն ու նրբությունները», «Պատերազմի հետևանքով վիրավորված անձանց հետ հոգեբանական

աշխատանքի առանձնահատկությունները», «Հետտրավմատիկ սթրեսային խանգարումներն ու դրանց վերականգնողական աշխատանքների առանձնահատկությունները»,

✓ «Հետտրավմատիկ ապրումներն ու վերականգնողական աշխատանքների առանձնահատկությունները երեխաների և այն անձանց հետ, որոնք հայտնվել են պատերազմական իրադրություններում», «Անհատական և խմբային հոգեբանական աշխատանքների կազմակերպման յուրահատկությունները արտակարգ իրավիճակներում», «Պատերազմի հետևանքով տեղահանվածների և անհայտ կորածների ընտանիքների հետ տարվող հոգեբանական աշխատանքների կազմակերպումն ու առանձնահատկությունները»:

✓ Մասնագիտական առումով անարդյունավետ է գործում զինվորական հոգեբանների ինստիտուտը: Նրանք ունեն մասնագիտական վերապատրաստումների խիստ կարիք՝ մասնավորապես, հետևյալ ուղղություններով՝ «Զինծառայողների շրջանում անհատական և խմբային հոգեբանական աշխատանքի առանձնահատկությունները», «Արցախում հոգեբանական ծառայության և արագ արձագանքման խմբի կազմակերպումն ու իրականացումը», «Մեփական ազգաբնակչության և հակառակորդի վրա հոգեբանական ներազդման ժամանակակից միջոցներն ու դրանց կիրառումը», «Երիտասարդ համայրման և մարտական համայրման հետ իրականացվող հոգեբանական անհետաձգելի միջոցառումների համակարգը» և այլն:

2016թ. ապրիլյան դեպքերի փորձը նույնպես վկայում է այն մասին, որ Արցախում հրատապ խնդիր է ունենալ հոգեբանական կենտրոն-ծառայություն, որը կարող է անհրաժեշտ օգնություն ցուցաբերել ինչպես բնակչությանը, այնպես էլ զինվորական կառույցներին:

### III. ՆՊԱՏԱԿԸ

Արցախում՝ պետական համալսարանի բազայի հիման վրա, ստեղծել բազմապրոֆիլ հոգեբանական կենտրոն-ծառայություն, որը կունենա հետազոտություններ իրականացնելու, արագ արձագանքելով արտակարգ իրավիճակներին՝ տուժածներին, օգնության կարիք ունեցողներին մասնագիտացված հոգեբանական օգնություն ցուցաբերելու և խաղաղ պայմաններում պազմապրոֆիլ հոգեբանական աշխատանքներ իրականացնելու կարողություն:

### IV. ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Կադրերի ընտրություն և վերապատրաստում:
2. Հոգեբանական կենտրոնի կարգավիճակի հաստատում:
3. Հոգեբանական կենտրոնի խնդիրների ձևակերպում:

4. Հոգեբանական կենտրոնի գործառնությունների մշակում:
5. Հոգեբանական կենտրոնի գործունեության պլանավորում:
6. Հոգեբանական կենտրոնի գործունեության մոնիթորինգ:

## V. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

1. Արցախի պետական համալսարանի հոգեբանական ծառայության կենտրոնում աշխատելու նպատակով Արցախի պետական համալսարանի մանկավարժության և հոգեբանության ամբիոնից ընտրել 2-3 դասախոսներ, ովքեր կունենան վերապատրաստվելու և պրակտիկ հոգեբանի գործունեություն իրականացնելու ցանկություն:
2. Արցախի պետական համալսարանի ասպիրանտներից, մագիստրատուրայի և բակալավրիատի բարձր կուրսերի ուսանողներից կատարել ընտրություն:
3. Մշակել Արցախի Պաշտպանության բանակի հոգեբանական կառույցների հետ համագործակցության ձևերը՝ ստորագրելով համապատասխան պայմանագիր:
4. Հստակեցնել հոգեբանական կենտրոնի կարգավիճակը, որը կարող է լինել կամ ԱրՊՀ ստորաբաժանում, կամ ՊՈԱԿ, կամ հիմնադրամ, կամ ՍՊԸ:
5. Հոգեբան մասնագետներից ձևավորել հոգեբանական արագ արձագանքման խումբ, որը ունակ կլինի շտապ հոգեբանական օգնություն ցուցաբերել արտակարգ իրավիճակներում հայտնված անձանց:
6. Կենտրոնի մասնագետների միջոցով կազմակերպել տարբեր շրջաններից ու համայնքներից ԱրՊՀ-ում սովորող ուսանողների հոգեբանական-լուսավորչական աշխատանք և նրանց միջոցով Արցախի բնակչությանը ծանոթացնել առաջին հոգեբանական օգնության առանձնահատկություններին:
7. Կենտրոնում ստեղծել հետազոտական և մեթոդական կենտրոն, որը կարող է անհրաժեշտության դեպքում գիտական և մեթոդական օգնություն ցուցաբերել Արցախում գործող հոգեբաններին և կառույցներին (Զինված ուժերին, դպրոցներին, համայնքապետարաններին և այլն):
8. Ստեղծել հոգեբանական ներագրման բաժին, որը կապահովի հակառակորդի դեմ «հոգեբանական պատերազմ» վարելու խորհրդատվական գործընթացը:

Ծրագրի մշակմանը մասնակցել է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ դասախոս, ՀՀ «Ապագա» հոգեբանական կենտրոնի ղեկավար, պրակտիկ հոգեբան, հ.գ.թ., դոցենտ Արմեն Բեջանյանը

ԱրՊՀ ՈՒՇՀՀՏՍՊԳ պրոռեկտոր, հ.գ.թ., դոցենտ

Վ.Յարամիշյան